ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐԱԲԿԻՐ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիահույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայթերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկարաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ

Հարգելի՛ արաբկիրցիներ,

2017 թվականի ընթացքում Արաբկիրում իրականացված ծրագրերի արդյունքում ունենք զգալի ձեռքբերումներ: Կատարված աշխատանքների ծավալը ներկայացվում է այս հաշվետվությամբ:
Գոհունակությամբ եմ նշում, որ Արաբկիրում ձևավորվել են կայուն ավանդույթներ, և արաբկիրցին դրանց հպարտ կրողն է: Որպես վարչական շրջանի ղեկավար, իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում բոլոր արաբկիրցիներին: Սեփական տան հանդեպ Ձեր սրտացավ վերաբերմունքի ու համագործակցային լինելու շնորհիվ է, որ մեր վարչական շրջանն ունի բարի համբավ ու յուրահատուկ գրավչություն, իսկ նրա անունը երբեմն նույնացվում է սրտաբացության, բարեկրթության և բարիդրացիության հետ:
Ինչպես մինչև այժմ, այնպես էլ հետագայում մեր առաջնահերթությունների մասն են կազմելու սոցիալական, մշակութային, կրթական և ենթակառուցվածքային հարցերը: Արաբկիրում պետք է ստեղծված լինեն արժանապատիվ ու հարմարավետ կյանքի պայմաններ, և մշակվող ու իրականացվող բոլոր ծրագրերը պետք է ծառայեն միմիայն այդ նպատակին:

Արաբկիր վարչական շրջանի ղեկավար
Հովհաննես Վարդանյան

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թ. Արաբկիր վարչական շրջանում իրականացվել են ասֆալտապատման, եզրաքարերի փոխարինման, սալիկապատման, թեքահարթակների կառուցման ու վերանորոգման և այլ տիպի աշխատանքներ:

- Ասֆալտապատման աշխատանքներ՝ շուրջ **55000** քմ ընդհանուր մակերեսով, որից **65** փողոցներ՝ շուրջ **35000** քմ, 82 բակային տարածքներ և մայթեր՝ շուրջ **20000** քմ:
- Եզրաքարերի նորով փոխարինման և վերանորոգման աշխատանքներ՝ **575** գծմ:
- Վերանորոգվել և կառուցվել են **40** թեքահարթակներ:
- Մայթերի, պուրակների սալիկապատումն ընդգրկել է **1515** քմ տարածք:

Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Վ.Դավթյանի անվան զբոսայգում և այգին Հյուսիսային Ճառագայթին միացնող ստորգետնյա անցումում: Հիմնանորոգվել են Միհեր Մկրտչյանի անվան հրապարակի ցայտաղբյուրները և բարեկարգվել է հարակից տարածքը:

Մասնավորի հետ համագործակցաբար իրականացվել է ներդրումային ծրագիր, որի արդյունքում «Արաբկիր» զբոսայգում կառուցվել է թռչող գիծ (զիփլայն): Զիփլայնը կապում է Արաբկիր վարչական շրջանը Աջափնյակի հետ՝ անցնելով Դավթաշենի կամրջի տակով, որի երկարությունը շուրջ **870** մ է:

Հիմնանորոգվել են 3 հասցեների՝ **150** քմ ընդհանուր մակերեսով հենապատեր

	Ասֆալտապատման աշխատանքներ	Սալիկապատման աշխատանքներ	
2015	103,371 քմ	1,573 քմ	2015
2016	62,000 քմ	1,453 քմ	2016
2017	55,000 քմ	1,150 քմ	2017

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Բնակարանային ֆոնդի պահպանման ուղղությամբ 2017 թ. կատարվել են մուտքերի բարեկարգման, վթարային պատշգամբների ամրացման ու վերանորոգման և բնակֆոնդի բարելավմանն ուղղված այլ աշխատանքներ:

- Բարեկարգվել է **160** մուտք:
- Վերանորոգվել է **16276** քմ ընդհանուր մակերեսով տանիք, որից՝ **155** շենքերում՝ **9747** քմ՝ հարթ, **216** շենքերում՝ **6560** քմ՝ թեք:
- Ամրացվել է վթարային **38**, նորոգվել՝ **102** պատշգամբ:

Համատիրությունների հետ ամենօրյա համագործակցության շրջանակներում տրամադրված նյութերով համատիրությունները վերանորոգել են **1800** քմ թեք տանիք: Իրականացվել են **2246** գծմ ընդհանուր երկարությամբ ներքին ջրագծերի վերանորոգման աշխատանքներ՝ 191 բազմաբնակարանային շենքերում: Մասնակի նորոգվել են **95** վերելակներ:

Վերանորոգված շքամուտքեր



ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2017 թ. Արաբկիր վարչական շրջանում իրականացվել են բակային տարածքների բարեկարգման, խաղահրապարակների կառուցման, մարզագոյքով համալրելու և այլ տիպի աշխատանքներ:



- Հիմնանորոգվել է **10** բակային տարածք:
- Նորոգման աշխատանքներ են իրականացվել **67** բակային տարածքներում, որոնցից **54**-ում կառուցվել են խաղահրապարակներ:
- Հանրային նշանակության բարեկարգ հատվածի է վերածվել ապօրինի հողազավթված **2000** քմ տարածք:
- **15** բակային տարածքներում իրականացվել են նկարազարդման աշխատանքներ՝ **1100** քմ մակերեսով: Նորոգվել են նստարաններ, աղբամաններ: Տեղադրվել է **9** զրուցարան և **72** մանկական խաղ:

Ստեղծված խաղահրապարակների քանակ

2015	**55 հատ**
2016	**38 հատ**
2017	**54 հատ**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. բնակչության խոցելի հատվածի համար իրականացվել են սոցիալական ծրագրեր:

- Կազմակերպվել է **346** ծնողների այցելություն ԼՂՀ-ում և ՀՀ սահմանամերձ գոտիներում ժամկետային զինծառայության մեջ գտնվող արաբկիրցի զինծառայողներին:
- «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակներում **286** ընտանիք նվեր է ստացել կենցաղային տեխնիկա:
- Սոցիալապես անապահով հարյուրավոր ընտանիքների տրվել է դրամական աջակցություն:
- Տարբեր բարեգործական ճաշարաններում սնվում են **306** արաբկիրցիներ:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

- ՀԿ-ների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ տրամադրվել է.
- կարիքավոր տասնյակ ընտանիքների՝ դրամական աջակցություն,
- հաշմանդամ երեխաներին՝ անվասայլակներ, հագուստ, անհրաժեշտ պարագաներ, հոգեբանական աջակցություն,
- կարիքավոր ընտանիքների երեխա-ներին՝ դպրոցական պայուսակներ,
- սիրիահայ ընտանիքներին՝ բնակարանի վարձ և բուժօգնություն:
- Ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել Արաբկիր ԵԿՄ , Արաբկիրի Հաշմանդամների ընկերության, ՀՄՊ վետերանների խորհրդին, «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական ճաշարանին:
- Հանքավանի «Արագած» ճամբար մեկնող **100** երեխայի նվիրվել են մարզաշապիկներ, արևապաշտպան գլխարկներ, քաղցրավենիք և խաղեր:
- Սոցիալապես անապահով ընտանիքների **160** երեխայի հատկացվել է դպրոցական պայուսակներ, Ամանորի առթիվ **1200** ընտանիքի տրամադրվել են սննդի փաթեթներ և **3100** երեխայի՝ նվեր-փաթեթներ:

ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող զինծառայողներին
այցելած ծնողների թիվ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. Արաբկիր վարչական շրջանում աշխույժ է եղել մշակութային կյանքը:

Կենտրոններ հաճախող երեխաների թիվ.

- Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոց է հաճախում **509**, Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց՝ **503** երեխա: Հ. 5 և հ. 6 գրադարաններից օգտվում է **3365** ընթերցող:
- «Երևանյան ամառ-2017» գլխավոր միջոցառումը մեկնարկել է վարչական շրջանի Վ. Դավթյանի անվան զբոսայգում: Կազմակերպվել են ցուցահանդեսներ, համերգային շքեղ ծրագրեր:
- «Երևանյան ամառ-2017» ծրագրի շրջանակներում Քանաքեռ ՀԷԿ, Փափազյան 21, Սունդուկյան 28, Ա. Ավետիսյան 74, 76 հասցեներում կազմակերպվել են 10-օրյա բակային ճամբարներ:
- Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև՝ տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, խաղեր և մրցույթներ:





2017 թ. զգալի աշխատանք է կատարվել նախադպրոցական հաստատությունների վերանորոգման, գույքային համալրման ուղղություններով:

Նախադպրոցական հիմնարկների հիմնանորոգում.

- Հիմնանորոգվել է Երևանի հ. 26 մանկապարտեզ ՀՈԱԿ-ը և համալրվել է անհրաժեշտ գույքով:

Նախադպրոցական հիմնարկների համար գույքի ձեռքբերում.

- Ձեռք են բերվել զգեստապահարան, բազմահարկ մահճակալներ, մանկական աթոռներ, սեղաններ
- Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև տարաբնույթ հանդեսներ, խաղեր և մրցույթներ:

ԱՊԱՀՈՎՎԵԼ Է **2492** ԵՐԵԽԱՅԻ ԱՆՎՃԱՐ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. աշխույժ է եղել վարչական շրջանի սպորտային կյանքը, վարչական շրջանի մարզիկներն ու թիմերը մրցանակային առաջատար տեղեր են գրավել տարբեր նշանակության մրցաշարերում:

- Մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց են հաճախում **158**, Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց՝ **438**, Երևանի Ալ. Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց՝ **202**, Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց՝**402**, Շախմատի մանկապատանեկան մարզադպրոց՝**230** սաներ:
- Արաբկիր վարչական շրջանի մարզիկներն ու թիմերը մրցանակային առաջատար տեղեր են նվաճել ինչպես վարչական շրջանի, այնպես էլ համաքաղաքային, հանրապետական ու միջազգային մրցաշարերում:
- Կազմակերպվել են շախմատի, հեծանվավազքի, ձյուդոյի, վոլեյբոլի, բազկամարտի մի շարք առաջնություններ, մրցաշարեր, մարզամշակութային միջոցառումներ, որոնցում՝ Արաբկիր վարչական շրջանի սաները ունեցել են ակտիվ մասնակցություն:

2017 թ. Արաբկիր վարչական շրջանում զգալի աշխատանք է կատարվել կանաչապատման ուղղությամբ:

- Ստեղծվել և բարելավվել է **5930** քմ ընդհանուր մակերեսով կանաչ գոտի՝ Խաչատրյան 33, Բաբայան 36, Կասյան 7, Մամիկոնյանց 56 շենքերի բակային տարածքներում:
- Տնկվել է **137284** ծաղիկ, **2380** թուփ և **516** ծառ: Մշտապես բարեկարգվում և խնամվում է **53** հա կանաչապատ տարածք:
- Անցկացվել է **475** գծմ ոռոգման նոր ցանց: Վերանորոգվել են ոռոգման ցանցի վնասված՝ **1656** գծմ ընդհանուր երկարությամբ հատվածներ:

ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

2017 թ. զգալի աշխատանք է կատարվել ջրագծերի, կոյուղագծերի, գազիֆիկացման և էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգման ուղղությամբ:



- Ջրամատակարարման համակարգի վերանորոգում՝ **3500** գծմ
- Կոյուղատար համակարգի վերանորոգում՝ **2850** գծմ
- Գազիֆիկացում՝ **1565** գծմ
- Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգում՝ **4856** գծմ
- Վերակառուցվել է **29** դիտահոր
- «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից բարելավման ներդրումային ծրագրով իրականացվել է **2880** գծմ հոսանքագծերի փոխարինում 10 հասցեներում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

2017 թ. Արաբկիր վարչական շրջանում շարունակվել են արտաքին լուսավորության ցանցի արդիականացման և ընդլայնման աշխատանքները:





Կառուցվել է **5180** գծմ երկարությամբ նոր ցանց՝ **202** լուսատուներով:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2017 թ. Արաբկիր վարչական շրջանն ակտիվ աշխատանք է իրականացրել միջազգային համագործակցությունն ամրապնդելու ուղղությամբ:

- Արաբկիր-Պլեսս Ռոբինսոն համագործակցության ու «Էրեբունի-Երեւան 2799» տոնակատարությունների շրջանակում Երեւան էր ժամանել Ֆրանսիայի Պլեսս Ռոբինսոնի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ փոխքաղաքապետ Կորին Մարկ Դյուջեյիի գլխավորությամբ: Այցի ընթացքում պատվիրակության կողմերն անդրադարձել են Արաբկիրի եւ Պլեսս Ռոբինսոն քաղաքների միջեւ հաստատված համագործակցությանը եւ քննարկել հետագա ծրագրերը:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

- Սեպտեմբերին Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի գլխավորությամբ պաշտոնական պատվիրակությունն այցելել է Սանկտ Պետերբուրգ՝ հանդիպելու նահանգապետ Գեորգի Պոլտավչենկոյին: Հանդիպման ընթացքում քննարկվել են ծրագրերի իրականացման հետ կապված հիմնախնդիրները, ստորագրվել համագործակցության համաձայնագրեր տնտեսության կառավարման, սոցիալական, առողջապահական, մշակութային, կրթական, սպորտի եւ երիտասարդության հարցերի, զբոսաշրջության զարգացման, ինչպես նաեւ տնտեսական կապերի հաստատման եւ մի շարք այլ ուղղություններով:

- Արաբկիր-ԼՂՀ համագործակցության շրջանակում կազմակերպվել են այցելություններ զորամասեր: Արցախում վարչական շրջանի ղեկավարն այցելել է մարտական դիրքեր եւ առաջնագծում հանդիպել զինծառայողների հետ մարտական հերթապահության ժամանակ: ԼՂՀ Մարտունու շրջանի զորամասին ցուցաբերվել է տեխնիկական աջակցություն:



Մենք
հաշվետու ենք
մեր համաքաղաքացիներին

ԹԵԺ ԳԻԾ՝
+(374 11) 518-188
arabkir@yerevan.am



www.yerevan.am